ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ

3 մարտի 2005 թ. N 89-Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԵՎ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԴԻԼԵՐԱՅԻՆ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՀՍԿԻՉ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ, ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը***որոշում է***՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության տարածքում արտարժույթի առք ու վաճառքի և արտարժույթի դիլերային առք ու վաճառքի գործունեություն իրականացնող անձանց կողմից կիրառման համար թույլատրելի հսկիչ-դրամարկղային մեքենաների, համակարգչային սարքավորումների և համակարգչային ծրագրերի ցանկը՝ համաձայն հավելված 1-ի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:՝

ՀՀ կենտրոնական
բանկի նախագահ **Տ. Սարգսյան**

2005 թ. մարտի 4
Երևան

Հավելված 1

Համաձայնեցված է՝
ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման
նախարար
_____ Կ. Ճշմարիտյան
_____2005թվական

ՀՀ կառավարությանն առընթեր հարկային
պե-
տական ծառայության պետ
_____ Ֆ. Ցոլակյան
_____2005 թվականի

Հաստատված է՝
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2005 թվականի մարտի 3-ի
թիվ 89-Ն որոշմամբ

Ց Ա Ն Կ

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԵՎ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԴԻԼԵՐԱՅԻՆ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՀՍԿԻՉ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ, ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ

1. Արտարժույթի առք ու վաճառքի և դիլերային առք ու վաճառքի գործունեություն իրականացնող անձանց կողմից կիրառման համար թույլատրելի են հետևյալ մոդելների հսկիչ-դրամարկղային մեքենաները՝

ա) Mini-FP3

բ) DATECS FP-300

գ) ND77.i

2. Արտարժույթի առք ու վաճառքի և դիլերային առք ու վաճառքի գործունեություն իրականացնող անձանց կողմից կիրառման համար թույլատրելի են ցանկացած տիպի համակարգչային սարքավորում (համակարգչային ծրագիր), որը կբավարարի Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած և հարկային մարմնի հետ համաձայնեցված համակարգչային ծրագրին ներկայացվող պահանջներին: